



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 488
Ապրիլ 4, 1991

Մեծայարգ
Տիար Մայքըլ Հայալեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Սաութ Միլուոքի.

Յարգելի Տիար Հայալեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները, որով կը տեղեկանանք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 24, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Մայքըլ Հայալեան
Կրէկ Կավրիք
Էլիըթ Բեշեան

Բարի եղէք շատով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ կը փափաքիմք ձեր ուշադրութեան յանձնել որ այս տեղեկագիրներուն պէտք է ընկերանայ մեզի ուղղուած նամակ մը, ուր պէտք է տրուած ըլլան Անդամական Ժողովի թուականը, անդամներուն թիւը, ներկաներուն թիւը, Ծխական Խորհուրդի ընտրուած անդամներուն անուններ, անոնց ստացած քուէները եւ խնդրանք՝ ընտրութիւնը վաւերացնելու:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցւանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջումի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ